Մարտի 30-ին «Դասավանդի՛ր, Հայաստան» ծրագրի մասնագետները տեղեկատվական հանդիպում կանցկացնեն ՀՖԿՍՊի-ում: «Դասավանդի՛ր, Հայաստան»-ը երկամյա դասավանդման ծրագիր է՝ Հայաստանի լավագույն երիտասարդ մասնագետների համար: Ծրագրի շրջանակներում նորավարտ ուսանողները և երիտասարդ մասնագետները վերապատրաստվում են, այնուհետև գործուղվում Հայաստանի մարզային դպրոցներ, որտեղ կա նրանց մասնագիտությամբ ուսուցչի կարիք:

Ծրագիրը սոցիալական փոփոխության հասնելու նախաձեռնություն է, որը հաջողությամբ իրականացվել է 48 երկրի Ազգային անկախ կազմակերպությունների կողմից, որոնք համախմբվել են Teach For All միջազգային ցանցի ներքո: Ծրագրին կարող են դիմել բոլորը, անկախ մասնագիտությունից և տարիքից: Անհրաժեշտ է ունենալ առնվազն բակալավրի դիպլոմ: Դիմելու և այլ մանրամասներին ծանոթանալու համար հրավիրում ենք մասնակցելու «Դասավանդի՛ր, Հայաստան»-ի տեղեկատվական միջոցառմանը, որը տեղի կունենա մարտի 30-ին, ժամը 12^{30}, 56 լսարանում: